Գի դը Մոպասան

Իմ հորեղբայր Ժյուլը

Սպիտակ մորուքով մի ծերունի մեզնից ողորմություն խնդրեց: Ընկերս՝ Ժոզեֆ Դավրանշը, հարյուր սու տվեց նրան: Անակնկալի եկա.
-Էս խեղճն ինձ մի դեպք հիշեցրեց : Կպատմեմ քեզ, ինչը ցայսօր մնացել է հիշողությանս մեջ:
Բնիկ Հավրից եմ: Ընտանիքս ունևոր չէր, հասկանու՞մես, հազիվ ծայրը ծայրին էինք հասցնում: Հայրս աշխատանքից ուշ երեկոյան էր տուն դառնում և շատ չէր վաստակում: Երկու քույր ունեի:

Մայրս շատ էր տանջվում նեղվածքից, ինչի մեջ ապրում էինք, և հաճախ ամուսնուն թթու խոսքեր էր ուղղում, նենգ ու քողարկված հանդիմանություններ: Էդ պահին խեղճ մարդը մի շարժում էր անում, որից սիրտս կտոր-կտոր էր լինում. ձեռքը տանում էր դեպի ճակատը, ասես սրբելու քրտինքը, ինչը բնավ գոյություն չուներ, և, ի պատասխան,ոչինչ չէր ասում : Ես զգում էի նրա անզոր ցավը: Մենք ամեն ինչում խնայում էինք: Երբեք չէինք ընդունի ընթրիքի հրավերներ՝ պատասխան հրավերից խուսափելու, կգնեինք խանութում մնացած մթերքը՝ ամենացածր գնով: Քույրերս էին կարում իրենց զգեստները և երկար վիճաբանում էին ժապավենի գնի շուրջ, որի մետրն արժեր տասնհինգ սանտիմ: Մեր առօրյա ճաշը ճարպով ապուրն էր և ամեն տեսակ սոուսներով տավարի միսը: Պարզվում է՝ առողջարար էր, բայց ինձ որ հարցնեին, այլ բան կնախընտրեի: Սարսափելի տեսարաններ էին ինձ սպասում, եթե պատռեի տաբատս կամ կորցնեի կոճակները: Այնուամենայնիվ ամեն կիրակի գնում էինք ծովեզրյա պտույտ կատարելու տոնական հագուկապով: Հայրս՝ իր թիկնոցով, մեծ գլխարկով, ձեռնոցներով, բռնում էր մորս ձեռքը, ով զարդարված էր տոնական օրերի դրոշակազարդ նավի նման:
Քույրերս, որ միշտ կազմուպատրաստ առաջինն էին, սպասում էին մեկնելու ազդանշանի: Բայց վերջին վայրկյանին միշտ պարզվում էր, որ հորս թիկնոցի վրա ինչ-որ հետք է մնացել, և հարկավոր էր բենզինով մաքրել:

Հայրս, մի մեծ գլխարկ գլխին, և միայն ժիլետով, համբերատար սպասում էր մինչև ավարտը, իսկ մայրս շտապում էր՝ ուղղելով կարճատեսի իր ակնոցը և հանելով ձեռնոցները, որ հանկարծ չկեղտոտվեին: Ճամփա էինք ընկնում մեծ հանդիսավորությամբ:

Քույրերս, ձեռք ձեռքի տված, գնում էին առջևից: Նրանց ամուսնանալու ժամանակն էր, և քաղաքը պիտի գիտենար էդ մասին: Ես մորս ձախ կողմն էի բռնում, իսկ հայրս՝ աջը: Հիշողությանս մեջ է խեղճ ծնողներիս հպարտ կեցվածքը կիրակնօրյա զբոսանքներին, նրանց դիմագծերի խստությունը:

Ծանրաքայլ առաջ էին շարժվում, ուղղաձիգ, ասես ծայրահեղ կարևոր մի գործ կախված էր հենց նրանց հանդիսավոր կեցվածքից:

Ամեն կիրակի, տեսնելով անծանոթ ու հեռավոր երկրներից եկող մեծ նավերը, հայրս անտարբեր հայացքով միևնույն բանն էր կրկնում.

-Եթե Ժյուլն էստեղ լիներ, այ քեզ անակնկալ:

Հորեղբայր Ժյուլը մեր ընտանիքի համար սարսափ էր եղել, իսկ հետո՝ միակ հույսը: Դեռ մանկուց լսել էի նրա մասին, և թվում էր՝ միանգամից կճանաչեի, էնքան որ էդ մտորումն ինձ հարազատ էր դարձել: Նրա կյանքի բոլոր մանրամասներն ինձ ծանոթ էին՝ մինչ Ամերիկա մեկնելը, չնայած որ էդ շրջանի մասին խոսվում էր ցածրաձայն: Հավանաբար վատ վարք էր ունեցել, այսինքն՝ ինչ-որ փողեր էր կերել, ինչն աղքատ ընտանիքներում ամենածանր հանցանքն է: Հարուստների աչքում մեկը, ով տրվում է զվարճանքների, պարզապես հիմարություն է գործում: Նրան անվանում են շվայտ, կարիքավորների աչքում նա, ով ստիպում է ծնողներին մսխել ունեցվածքը, վատ համբավի տեր է դառնում՝ մինչև իսկ՝ սրիկա ու ապուշ:

Էս տեսակ տարբերակումը ճիշտ է, չնայած որ փաստը դրանից չի փոխվում, քանզի միմիայն հետևանքներն են խոսում եղածի լրջության մասին:

Հորեղբայր Ժյուլը, իր բաժինը մինչև վերջ վատնելուց հետո, նշանակալիորեն կրճատել էր ժառանգության բաժինը, որի հույսով հայրս ապրում էր:

Նրան տեղափոխել էին Ամերիկա, ինչպես անում էին այդ ժամանակ, Հավրից Նյու-Յորք գնացող առևտրական նավով: Տեղ հասնելով՝ սկսել էր ինչ-որ բանի առևտրով զբաղվել, գրել էր, որ մի քիչ գումար էր աշխատում և հույս ուներ՝ փոխհատուցել իմ հորը պատճառված վնասները: Էդմիտքը մեր ընտանիքում խոր հուզմունքի առիթ դարձավ: Ժյուլը, որ չարժեր, ինչպես ասում են, մի շան ոտքի չորս պատյանները,

դարձավ ազնիվ ու բարեսիրտ, իսկական Դավրանշ:
Մի նավապետից էլ պատմեց, որ մեծ կրպակ էր վարձել ու լուրջ առևտրով էր զբաղվում:
Երկրորդ նամակում, որ ստացանք երկու տարի անց, ասվում էր. «Սիրելի Ֆիլիպ, մի մտահոգվիր առողջությանս համար: Գործերս նույնպես լավ են: Վաղը մեկնում եմ երկար ճամփորդության դեպի Հարավային Ամերիկա: Հնարավոր է՝ շատ տարիներ ինձնից լուր չունենաս: Եթե անգամ չգրեմ, չանհանգստանաք: Կվերադառնամ Հավր փող կուտակելուց հետո: Հուսով եմ՝ երկար չի տևի, և բոլորս միասին կապրենք երջանիկ…»: Նամակն ընտանիքի ավետարանն էր դարձել: Պատեհ-անպատեհ կարդում էինք, և դեռ ավելին՝ ցույց էինք տալիս բոլորին: Տասը տարի շարունակ հորեղբայր Ժյուլը ոչ մի լուր չտվեց իրենից, սակայն որքան ժամանակն անցնում էր, Էնքան հայրս ավելի ու ավելի էր հույս փայփայում: Մայրս էլ հաճախ ասում էր.
-Երբ Ժյուլը մեզ օգնի, կփոխվի մեր վիճակը : Վերջապես մեկը, որ կարողացավ գործից գլուխ հանել:
Ամեն կիրակի, նայելով հեռավոր հորիզոնների երկնքում տարածված ծխի սև երիզներին, որ արձակում էին շոգենավերը, հայրս չէր դադարում կրկնել.
-Եթե Ժյուլը դրանց մեջ լիներ, այ քեզ անակնկալ:
Մենք էլ սպասում էինք, որ մի թաշկինակ էր ծածանվելու, և մեկը հեռվում կանչելու էր.
-Օ՛, Ֆիլիպ:
Հազար ու մի ծրագրեր էինք կազմել էդ անխուսափելի վերադարձի հետ կապված, օրինակ որոշված էր, որ հորեղբոր գումարով գյուղական տուն էինք ձեռք բերելու Ինժուվիլի մոտ: Ոչ մի կերպ չէի հաշտվում մտքի հետ, որ հայրս դեռ չէր զբաղվում էդ գործերով :
Մեծ քույրս քսանութ տարեկան էր, փոքրը՝ քսանվեց: Նրանք ոչ մի կերպ չէին ամուսնանում, և մեծ ցավ էր ընտանիքի համար:
Վերջապես մի թեկնածու ներկայացավ երկրորդի համար: Ոչ շատ հարուստ, բայց պատվավոր ծառայող էր: Միշտ էլ համոզված եմ եղել, որ հորեղբայր Ժյուլի նամակը մի երեկո վերջ էր դրել երիտասարդի տատանումներին և որոշման էր բերել նրան : Մեծ սիրով ընդունեցինք նրան, և որոշվեց՝ ամուսնությունից հետո ընտանիքը փոքրիկ ճամփորդության էր մեկնելու Ժերսեյ:
Ժերսեյը լավագույն ճամփորդությունն է չունևորների համար: Հեռու չէ : Նավով անցնում ենք ծովը և հայտնվում օտար հողի վրա. այս կղզին պատկանել է

անգլիացիներին: Ֆրանսիացին երկու ժամ նավարկելուց հետո կարող է այցելել հարևան ժողովրդին, ծանոթանալ նրա, թերևս, խղճալի բարքերին, բրիտանական դրոշակով ծածկված կղզուն, ինչպես կասեին հասարակ խոսքի մարդիկ: Ժերսեյ նախատեսված ճամփորդությունը դարձել էր մեր մտահոգության առարկան, միակ սպասումը, մեր բոլոր պահերի երազը:
Վերջապես մեկնեցինք: Հիշում եմ, ասես երեկ լիներ. Գրանիլի կառամատույցի գոլորշին, սարսափած հորս, որը հետևում էր երեք ճամպրուկների տեղափոխմանը, անհանգիստ մորս՝ չամուսնացած քրոջս ձեռքը բռնած, որը մոլորվել էր, ինչպես իր թխսատեղում մենակ մնացած հավը, և նորապսակներին, որոնք անընդհատ ետ էին մնում. ես էլ հետաքրքրությունից հաճախ գլուխս թեքում էի:
Շոգենավը սուլեց: Ահա և մենք տախտակամածի վրա ենք. նավը, թողնելով քարափը, հեռացավ հարթ ծովի վրայով, որ հիշեցնում էր կանաչ մարմարյա սեղան: Ափը հետզհետե հեռանում էր մեր տեսադաշտից. երջանիկ էինք, հպարտ այն մարդկանց նման, որոնք քիչ են ճամփորդում:
Հայրս փորը մեկնել էր իր թիկնոցի տակից, ինչի վրայի հետքերն առավոտյան խնամքով մաքրել էինք : Շուրջը բենզինի հոտ էր տարածվում, ինչն ինձ նորից բերեց նրան, որ կիրակի էր:
Եվ հանկարծ հայրս նկատեց երկու հմայիչ կին, ում երկու պարոն ոստրե էին հյուրասիրում: Մի ծեր նավաստի՝ ցնցոտին հագին, դանակի պոչով բացում էր խեցիները ու տալիս էր պարոններին, սրանք էլ իրենց հերթին ոստրեները տալիս էին կանանց:
Զգուշորեն ուտում էին՝ նուրբ թաշկինակի մեջ պահելով խեցիները և ապա մոտեցնում էին բերանին՝ չաղտոտելու զգեստները: Իսկ հետո խմում էին ջուրը և խեցին կամաց նետում էին ծովը:
Հորս անկասկած դուր էր եկել նավի վրա ոստրե ուտելու «ազնվական» կարգը: Մտածեց՝ բարձրաճաշակ մարդկանց է հատուկ և մոտենալով մորս ու քույրերիս՝ հարցրեց.
– Ոստրե չուտե՞նք:
Մայրս տատանվում էր ծախսի պատճառով, բայց քույրերս միանգամից համաձայնեցին: Մայրս անհանգիստ ձայնով ասաց.
-Վախենամ, թե ցավի ստամոքսս: Միայն երեխաների համար վերցրու, բայց չափը մի

անցիր, թե չէ կհիվանդանան:
Հետո շուռ գալով իմ կողմը՝ ավելացրեց.
– Ինչ վերաբերում է Ժոզեֆին, նա կարիքը չունի. սխալ է տղաներին երես տալը:
Եվ ուրեմն մնացի մորս կողքին, չնայած անարդար համարեցի էդ տեսակ խտրականությունը: Հայացքս ուղղել էի հորս. հպարտորեն ուղեկցում էր երկու աղջիկներին և փեսային դեպի ցնցոտի հագած ծեր նավաստին:
Երկու կանայք նոր էին հեռացել, իսկ հայրս ցույց էր տալիս քույրերիս ոստրե ուտելու ճիշտ ձևը՝ որ հանկարծ ջուրը միջից չհոսեր. նույնիսկ ցանկացավ օրինակ ծառայել՝ ուտելով մի ոստրե: Փորձելով նմանակել կանանց՝ միանգամից ամբողջ հեղուկը թափեց իր թիկնոցին : Ականջներումս մնաց մորս մրմունջը :
-Այ մարդ, ասա՝ հանգիստ քո տեղում մնայիր:
Սակայն հանկարծ զգացի, որ ինչ-որ բան անհանգստացնում էր հորս: Մի քանի քայլ արեց, ակնապիշ նայեց նավաստու շուրջը հավաքված իր ընտանիքին ու շտապ դեպի մեզ եկավ: Ինձ թվաց՝ շատ գունատ էր և առանձնակի հայացքով էր, որ նայում էր:
Կիսաձայն դիմեց մորս.
– Այ քեզ բան. մարդը, որ ոստրեները զատում էր կեղևից , ինչ նման է Ժյուլին:
– Ի՞նչ Ժյուլ,- հարցրեց մայրս:

– Եղբորս, եթե չիմանայի Ժյուլի բարեկեցիկ կյանքն Ամերիկայում, կմտածեի՝ ինքն է, որ կա :

Մայրս սարսափածթոթովեց.

– Գժվե՞լ ես, ինչ է: Դե գիտես որ նա չէ. հիմարություններ ես դուրս տալիս:

– Կլարիս, գնա ինքդ տես, որ համոզվես:

Խեղճ կինը տեղից վեր թռավ ու գնաց քույրերիս մոտ: Ես էլ էի նայում մարդուն: Ծեր էր, կեղտոտ, կնճռոտած, աչքն էլ իր գործից չէր կտրում:
Երբ մայրս եկավ, նկատեցի, որ դողում էր: Շատ արագ խոսեց.
-Ինքն է՝ Ժյուլը : Գնա և նավավարից տեղեկացիր: Միայն թե զգույշ, որ հանկարծ էդ անպիտանը մեզնից չկառչի:

Հայրս հեռացավ, բայց ես գնացի նրա ետևից: Հուզված էի: Կապիտանը՝ բարձրահասակ, նիհարավուն, երկար մորուքով մի մարդ, զբոսնում էր նեղ կամրջի վրա, խիստ դեմքի արտահայտությամբ, ասես Հնդկաստան տանող նավագնացության գիծն իր ձեռքում լիներ :

Հայրս հանդիսավոր կերպով մոտեցավ նրան՝ հարցուփորձ անելով նրա գործի մասին և միաժամանակ չմոռանալով հաճոյախոսել:

Ինչո՞վ է հայտնի Ժերսեյը: Ի՞նչ արտադրություն ունի: Որքա՞ն է բնակչությունը: Ի՞նչ ավանդույթներ ու սովորույթներ կան Էստեղ: Իսկ բնությու՞նը և էլի շատ ու շատ հարցեր:
Կարելի էր կարծել, թե խոսքն առնվազն Ամերիկայի Միացյալ Նահանգների մասին էր: Հետո խոսեցին մեզ տանող էքսպրես նավի մասին, և վերջում բանը հասավ անձնակազմին: Հայրս փոքր-ինչ անհանգիստ տոնով հարցրեց.
-Լսեք, կապիտան, մարդը, որ ոստրեները զատում է կեղևից, որևէ բան գիտե՞ք նրա մասին:
Նավապետը, որ էս տեսակ խոսակցության պատճառով հունից արդեն դուրս էր եկել, կոպիտ պատասխան տվեց.

– Ֆրանսիացի ծեր թափառաշրջիկ է, որին անցյալ տարի գտել եմ Ամերիկայում և հայրենիք վերադարձրել: Բանից պարզվում է՝ Հավրում բարեկամներ ունի, սակայն չի ուզում վերադառնալ, քանի որ փող է պարտք նրանց: Անունը Ժյուլ է…Ժյուլ Դարմանշ կամ Դարվանշ: Ինչ-որ ժամանակ հարուստ է եղել, բայց տեսնում եք, թե ինչ օրն է ընկել:
Հայրս, ով ամբողջովին զունատվել էր, կոկորդը սեղմելով և խոժոռ հայացքով ասաց.
-Շատ լավ: Չեմ զարմանում: Շնորհակալ եմ, նավապետ:
Իսկ հետո հեռացավ, մինչդեռ ծովայինը շարունակում էր չարացած նայել.
Հայրս այլայված դեմքով դարձավ մորս կողմը: Էդ պահին մայրս ասաց.
-Նստիր, թե չէ մի բան կնկատի:
Վայր ընկավ նստարանին՝ արտաբերելով.

-Նա է, նա…

Այնուհետ հարցրեց.

-Հիմա ի՞նչ անենք:

– Հեռու տար երեխեքին: Քանի որ Ժոզեֆն ամեն ինչ գիտե, կգնա ետևներից: Բայց զգույշ լինենք, որ հանկարծ մեր փեսան գլխի չընկնի: Հայրս սարսափած մրմնջաց.
-Եվ ինչ աղետ…

-Ես միշտ էլ կասկածել եմ, որ էդ սրիկան ոչինչ էլ չէր անելու ու փորձանք էր լինելու մեր գլխին:

-Էլ ի՞նչ կարելի է սպասել Դավրանշից,-նյարդայնացած հավելեց մայրս : Հայրս ձեռքը տարավ ճակատին, ինչպես անում էր կնոջ հանդիմանությունների ժամանակ:
Իսկ մայրս դեռ շարունակում էր.

-Հիմա Ժոզեֆին փող տուր, որ գնա և վճարի ոստրեների համար: Էդ էր մնացել, որ մուրացիկը մեզ ճանաչի: Այ թե տեսարան կլիներ նավի վրա: Գնանք նավի մյուս ծայրը. էնպես արա, որ էդ մարդը մեզ մոտ չգա:
Տեղից վեր կացավ, ու բոլորով հեռացան՝ ինձ հարյուր սու տալուց հետո: Անակնկալի եկած քույրերս սպասում էին իրենց հորը : Փչեցի, թե մայրս վատ էր զգացել ջրից և հարցրի ոստրեներ բացող ծերունուն.

– Ձեզ ի՞նչ պիտի տանք, պարոն: Ես ուզում էի ասել «հորեղբայր»:
-Երկու ֆրանկ հիսուն ցենտ,-պատասխանեց:

Մեկնեցի իմ հարյուր սուն, ու ստացա մանրադրամը: Ուշադիր նայում էի նրա ձեռքին, նավաստու նիհար ու կնճռոտ ձեռք էր : Թշվառ դեմքի արտահայտություն ուներ, իսկ մտքումս կրկնում էի.

«Իմ հորեղբայրն է, հորս եղբայրը»: Տաս սու թեյավճար թողեցի: Չմոռացավ շնորհակալություն հայտնել.

– Աստված քեզ օրհնի, տղա՛ս:

Եվ խոսեց ողորմությանը վարժված աղքատ մարդու նման. իսկ ինչ պիտի արած լիներ Ամերիկայում ՝ մուրալուց զատ : Քույրերս, մեծահոգությունիցս ապշած, ինձ էին նայում:

– Երեք ֆրա՞նկ. անհնար բան ես ասում:

– Տաս սուն թեյավճար թողեցի:

Մայրս վեր թռավ և նայելով աչքերիս մեջ.

– Դու խենթ ես: Տաս սու տալ էս մարդուն, էս ոչնչությանը:

Մի պահ կանգ առավ հորս հայացքից, որն աչքով ցույց էր տալիս փեսային: Հետո բոլորս լռեցինք:

Մեր առջև՝ հորիզոնին, մանուշակագույն ստվերն իր արտացոլումն էր գտել ծովի մեջ: Ժերսեյն էր: Երբ մոտեցանք մատույցներին, բուռն ցանկություն համակեց ինձ մեկ անգամ էլ տեսնել հորեղբայր Ժյուլին, մոտենալ և ինչ-որ քնքուշ ու մխիթարական խոսքեր ասել:

Բայց ոստրե ուտող էլ չկար, նա անհետացել էր. երևի իջել էր նավամբարը, որտեղ և կենում էր էդ թշվառը:

Վերադարձին մենք նստեցինք Սեն-Մալո նավը, որ նրան չհանդիպեինք: Մայրս շատ էր անհանգիստ…

Ես էլ չտեսա հորս եղբորը: Հիմա կհասկանաս՝ ինչու եմ երբեմն հարյուր սու տալիս թափառաշրջիկներին :

Թարգմանությունը ֆրանսերենից՝ Էվրիկա Երիցյանի